

1.3. Գներ և սակագներ

Գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների 2004թ. հունվար-օգոստոսին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքս <sup>1)</sup>	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս <sup>2)</sup>	Գների ինդեքսը շինարարությունում <sup>3)</sup>	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս <sup>4)</sup>	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս <sup>5)</sup>	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս <sup>6)</sup>
Հունվար	102.5	99.5	100.3	99.8	98.5	101.0
Փետրվար	99.4	108.6	97.9	100.4	101.0	99.5
Մարտ	100.3	101.9	102.4	107.7	97.2	101.1
Ապրիլ	101.2	96.1	99.8	99.7	99.8	99.5
Մայիս	101.1	102.1	99.9	98.7	99.6	102.2
Հունիս	99.9	103.8	99.96	99.5	88.5	100.9
Հուլիս	97.5	96.7	99.0	97.3	90.6	103.3
Օգոստոս	97.6	101.2	99.7	97.4	80.1	101.6
Օգոստոսը 2003թ. դեկտեմբերի նկատմամբ	99.5	109.8	99.0	100.1	93.0*	111.5*
2004թ. հունվար օգոստոսը 2003թ. հունվար-օգոստոսի նկատմամբ	108.1	121.3	102.3	100.3	110.0	107.5

\*) 2004թ. օգոստոսի և 2003թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

<sup>1)</sup> Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

<sup>2)</sup> Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով: Գների ինդեքսի հաշվարկը կատարվում է Ժողովրդական ժյուրիի համամիութենական դասակարգչի (ԺՏԵՀԴ) համաձայն: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին (ՏԳՏԴ) համապատասխան գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մշակման փուլում է:

<sup>3)</sup> Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:


<sup>4)</sup> Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

<sup>5)</sup> Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

<sup>6)</sup> Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

Գների, սակագների աճի տեմպերը 2003-2004թթ. հունվար-օգոստոսին

(նախորդ տարվա հունվար-օգոստոսի նկատմամբ, %)




**Սպառողական գներ:** 2004թ. օգոստոսին հանրապետության սպառողական շուկայում շարունակվել է հունիս-հուլիս ամիսներին գրանցված գնանկման միտումը և երեք ամիսների ընդհանուր գնանկումը կազմել է 5.0%: Օգոստոսին հուլիսի համեմատ գրանցվել է 2.4% գնանկում, ինչը հիմնականում պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխությունների արդյունք է:

2004թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 3.4%, ոչ պարենային ապրանքների 0.1% գնանկում: Ծառայությունների ոլորտում սակագները նվազել են 0.1%:

2004թ. հունվար-օգոստոսին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.05%, ինչը ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից 0.15 տոկոսային կետով (0.2%):

**Սպառողական գների հավելաճը 1995-2004թթ. օգոստոսին**

(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)




Սպառողական գների ինդեքսը 2004թ. օգոստոսին 2003թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 99.5%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 98.6%-ի դիմաց:

**Սպառողական գների փոփոխությունները 2004թ. օգոստոսին**

(%)


	2004 թվականի			
	օգոստոսը		հունվար- օգոստոսը 2003թ. հունվար- օգոստոսի նկատմամբ	օգոստոսը 2002թ. նկատմամբ
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. օգոստոսի նկատմամբ		
Սպառողական գների ինդեքսը այդ թվում՝	99.5	109.5	108.1	109.1
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	99.1	114.1	111.4	112.3
ոչ պարենային ապրանքների	99.6	101.0	100.7	102.3
ծառայությունների	100.9	101.0	101.8	103.5

**ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2004թ. հունվար-օգոստոսին**  
(ճախորդ ամսվա համեմատ, %)



**Արտարժույթային շուկա:** 2004թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետության թե՛ սպառողական, թե՛ արժույթային շուկաներում գրանցվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի նվազում, կազմելով համապատասխանաբար 2.4% և 1.6%: Օգոստոսին 2003թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի նվազումը կազմել է համապատասխանաբար 0.5% և 8.4%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել է նմանատիպ միտում և սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի նվազումը կազմել է համապատասխանաբար 1.4% և 1.2%: ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը 2004թ. օգոստոսին կազմել է 517.63 դրամ, ինչը 10.4% ցածր է 2003թ.-ի օգոստոսի համապատասխան ցուցանիշից (577.84 դրամ):

**ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2003-2004թթ. հունվար-օգոստոսին**  
(ճախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



**Պարենային ապրանքների գներ.** 2004թ. հունիս-օգոստոսին պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 7.7% ընդհանուր գնանկում, ընդ որում, գնանկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է օգոստոսին՝ 3.8%: Վերջինիս մեծապես նպաստել է մրգի, ձկնամթերքի, բանջարեղենի գնանկումը:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի


(%)

	2004 թվականի			
	օգոստոսը		հունվար-օգոստոսը 2003թ. հունվար-օգոստոսի նկատմամբ	օգոստոսը 2002թ. նկատմամբ
	2004թ. հուլիսի նկատմամբ	2003թ. օգոստոսի նկատմամբ		
<b>Պարենային ապրանքներ</b> (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	96.6	114.1	111.4	112.3
<b>Պարենային ապրանքներ</b>	96.2	115.6	112.5	113.6
հացամթերք	99.6	122.2	129.1	130.9
մսամթերք	100.1	114.6	113.4	122.8
ծկնամթերք	83.5	167.7	101.8	113.2
կաթնամթերք	96.4	105.5	105.9	99.5
ծու	99.6	116.8	115.9	108.7
կենդանական և բուսական յուղ	97.7	104.0	108.6	107.1
միրգ	76.7	142.4	108.0	126.4
բանջարեղեն և կարտոֆիլ	88.7	111.6	93.9	75.5
շաքարավազ	99.5	94.8	95.7	97.4
սուրճ, թեյ, կակաո	99.9	100.2	101.7	101.5
հրուշակեղեն	100.0	102.7	101.8	104.0
այլ մթերքներ	100.3	101.4	100.5	99.7
ոչ ոգելից խմիչք	100.0	106.5	104.4	109.3
<i>Ոգելից խմիչք և ծխախոտ</i>	100.1	101.4	102.1	100.9

2004թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է մրգի 23.3% գնանկում, ինչը հիմնականում պայմանավորվել է դեղձի (48.1%), տանձի (33.4%), սալորի (30.3%), խնձորի (29.3%), ինչպես նաև բուստանային մշակաբույսերից սեխի (65.9%) և ձմերուկի (50.7%) գնանկումով: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է մրգի 31.6-7.4% գնանկում, ընդ որում, գնանկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում մրգի գնանկումը կազմել է 23.9%:

Մրգի գների փոփոխությունները 2002-2004թթ. հունվար-օգոստոսին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)




Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2004թ. օգոստոսին շարունակվել է դեռևս հունիս-հուլիսին գրանցված և սեզոնայնությամբ պայմանավորված գնանկման միտումը և երեք ամիսների ընդհանուր գնանկումը կազմել է 41.3%: Օգոստոսին հուլիսի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի գնանկումը կազմել է 11.3%, ինչը հիմնականում պայմանավորվել է լոլիկի (66.8%), սմբուկի (61.4%), կանաչ պղպեղի (48.6%), գազարի (37.5%), ճակնդեղի (36.3%), գլուխ սոխի (17.2%) գնանկումով: Հանրապետության դիտարկված բոլոր

քաղաքներում արձանագրվել է բանջարեղենի և կարտոֆիլի 21.4-6.7% գնանկում, ընդ որում գնանկման համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում բանջարեղենի և կարտոֆիլի գնանկումը կազմել է 10.6%:

**Բանջարեղենի գների փոփոխությունները 2002-2004թթ.**

(նախորդ ամսվա նկատմամբ, %)



Ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում 2004թ. օգոստոսին հուլիսի համեմատ արձանագրվել է 0.1% գնաճ, ինչը ծխախոտի (0.1%) և ոգելից խմիչքի (0.5%, պայմանավորված կոնյակի թանկացումով) գնաճի արդյունք է:

**Ոչ պարենային ապրանքների գներ:** 2004թ. օգոստոսին 2003թ. դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցված 0.4% գնանկումը 0.6 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (1.0%):

**Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները**

(%)

	2004 թվականի			
	օգոստոսը		հունվար- օգոստոսը 2003թ. հունվար-օգոստոսի նկատմամբ	օգոստոսը 2002թ. նկատմամբ
	2004թ. հուլիսի նկատմամբ	2003թ. օգոստոսի նկատմամբ		
<b>Ոչ պարենային ապրանքներ այդ թվում.</b>	99.9	101.0	100.7	102.3
հազուստ և կտորեղեն	99.7	98.2	98.8	99.4
վառելիք	101.6	111.4	106.4	125.9
կահույք	98.6	93.2	96.1	93.4
գորգեղեն	99.8	99.8	99.9	103.2
տեքստիլեղեն	99.7	100.0	98.7	98.0
կենցաղային էլեկտրաապրանքներ	99.5	97.0	97.5	93.3
խոհանոցային սպասք	99.7	98.1	99.5	100.0
լվացամիջոցներ	100.0	100.9	101.3	102.2
շինանյութեր	99.7	98.5	99.5	97.4
այգեգործական ապրանքներ	100.2	101.6	106.7	106.8
դեղամիջոցներ	99.8	101.5	98.3	93.4
անձնական օգտագործման մեքենաներ և բեռզին	100.1	113.5	109.0	121.7
մշակույթի ապրանքներ	98.6	92.8	95.8	91.2
գրեմական պիտույքներ	100.6	100.7	100.7	100.6
զեղահարդարման ապրանքներ	100.0	101.1	101.0	102.1
ոսկերչական ապրանքներ	98.6	103.9	106.9	121.2
անձնապիտո ապրանքներ	100.3	98.3	98.5	99.3

2004թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի 0.6% գնանկում, իսկ դիզելային վառելիքի գծով՝ 2.2% գնաճ: Օգոստոսին 2003թ. դեկտեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գնաճը կազմել է համապատասխանաբար 13.9% և 5.6%:

**Ծառայությունների սակագներ:** 2004թ. օգոստոսին 2003թ. դեկտեմբերի համեմատ ծառայությունների ոլորտում գրանցվել է 0.9% հավելաճ, ինչը ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից 1.1 տոկոսային կետով (2.0%):

**Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները**

	2004 թվականի (%)			
	օգոստոսը		հունվար-օգոստոսը 2003թ. հունվար-օգոստոսի նկատմամբ	օգոստոսը 2002թ. նկատմամբ
	2004թ. հուլիսի նկատմամբ	2003թ. օգոստոսի նկատմամբ		
<b>Ծառայություններ, ընդամենը</b>	99.9	101.0	101.8	103.5
<i>այդ թվում.</i>				
կենցաղային	99.6	97.6	98.6	97.3
բնակարանային-կոմունալ բուժսպասարկման	100.0	103.1	102.2	103.1
տրանսպորտի	100.4	98.5	103.0	105.7
կապի	98.5	98.4	102.1	106.8
մշակույթի	99.9	134.0	130.3	137.3
կրթության համակարգի	99.8	99.0	98.7	101.0
հանգստի կազմակերպման	99.4	103.3	102.6	105.1
հանրային սննդի	100.5	108.3	104.8	112.0
իրավական և բանկային	100.0	100.3	100.0	100.0

**Սպառողական զների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները:** 2004թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում դիտարկված բոլոր քաղաքներում գրանցվել է սպառողական զների 3.2-1.2% նվազում (գնանկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Եղեգնաձորում): Մայրաքաղաքում արձանագրվել է սպառողական զների 2.5% նվազում:

**Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2004թ. օգոստոսի 30-ի դրությամբ**

*(դրամ՝ կգ-ի համար)*

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
<b>ԴԴ, միջինը</b>	1409	1254	1461	680	466	251	106	163	103	345
<i>այդ թվում.</i>										
Երևան	1450	1254	1427	682	464	251	107	163	100	354
Գյումրի	1300	1267	1510	663	475	264	102	177	83	375
Վանաձոր	1380	1250	1485	639	498	238	107	165	106	344
Վաղարշապատ	1400	1150	1380	650	490	242	100	120	100	230
Թալին	1400	1250	1550	750	450	255	120	150	120	250
Դիլիջան	1400	1200	1550	700	450	255	100	150	100	400
Հրազդան, Չարենցավան	1410	1300	1480	650	450	250	100	150	100	240
Եղեգնաձոր	1250	1300	1500	700	500	240	120	200	150	300
Մարտունի	1250	1300	1600	750	450	250	110	200	100	400
Կապան	1260	1280	1660	692	460	262	112	210	188	500
Արտաշատ	1350	1155	1600	650	439	250	100	250	100	300

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2004թ. օգոստոսի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6238 դրամ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Կապանում՝ 6624 դրամ, իսկ ամենացածրը՝ ք. Վաղարշապատում՝ 5862 դրամ),

ինչը 6.9% գերազանցել է նույնանուն ապրանքատեսակների 2003թ. օգոստոսի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (5836 դրամ):

2004թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետության դիտարկված 7 քաղաքներում գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.8-0.1% գնանկում (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է Դիլիջանում), Գյումրի և Եղեգնաձոր քաղաքներում՝ 0.3% և 0.5% գնաճ, իսկ ք. Կապանում հուլիսի համեմատ գների մակարդակը մնացել է անփոփոխ:

2004թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետության դիտարկված 4 քաղաքներում գրանցվել է ծառայությունների սակագների 0.5-0.2% նվազում, իսկ մյուս 6-ում՝ 0.1-0.6% հավելված: Մայրաքաղաքում ծառայությունների սակագները նվազել են 0.2%:

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2004թ. օգոստոսին 2003թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի**

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում					ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից			ծառայությունների	
			պարենային ապրանքների	ոգելից խմիչքի և ծխախոտի	ոչ պարենային ապրանքների		
<b>ՀՀ, ընդամենը</b>	99.5	99.2	99.1	98.8	99.6	100.9	
<i>այդ թվում.</i>							
Երևան	99.1	98.9	98.8	99.0	99.1	99.9	
Գյումրի	100.5	100.0	100.2	99.0	99.4	102.9	
Վանաձոր	100.6	100.1	100.4	96.2	100.4	103.3	
Վաղարշապատ	99.8	99.4	98.9	100.1	101.2	101.5	
Թալին	99.0	97.6	96.9	100.8	99.3	105.6	
Դիլիջան	100.5	100.6	100.9	98.3	100.2	99.9	
Հրազդան, Չարենցավան	99.1	98.5	98.4	96.4	100.2	101.9	
Եղեգնաձոր	99.5	98.7	98.5	100.6	98.9	103.0	
Մարտունի	102.0	102.2	102.7	102.7	99.9	101.1	
Կապան	98.9	98.2	97.6	94.2	102.1	102.7	

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսները 2004թ. Արտաշատ<sup>1</sup> քաղաքում**

*(նախորդ ամսվա նկատմամբ, %)*

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում				
		սպառողական ապրանքների	դրանցից			ծառայությունների
			պարենային ապրանքների	ոգելից խմիչքի և ծխախոտի	ոչ պարենային ապրանքների	
Մարտ	100.4	100.2	100.3	100.0	99.9	101.1
Ապրիլ	102.1	102.1	102.6	100.3	101.1	102.0
Մայիս	101.9	102.2	103.0	100.4	100.0	100.6
Հունիս	99.5	99.4	99.1	98.4	100.9	100.1
Հուլիս	97.7	97.4	97.0	95.0	99.7	99.2
Օգոստոս	97.9	97.4	96.6	99.0	99.8	99.9

**Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը:** 2004թ. օգոստոսին 2003թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի 9.8% գնաճ, ինչը ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից 1.9 տոկոսային կետով (11.7%):

<sup>1</sup> 2004թ. փետրվարից սկսած գների դիտարկումը կատարվում է նաև Արարատի մարզում (Արտաշատ քաղաքում):

**Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի**

(%)

	2004 թվականի			
	օգոստոսը		հունվար-օգոստոսը 2003թ. հունվար- օգոստոսի նկատմամբ	օգոստոսը 2002թ. նկատմամբ
	2004թ. հուլիսի նկատմամբ	2003թ. օգոստոսի նկատմամբ		
Ամբողջ արդյունաբերությունը	101.2	120.2	121.3	138.3
<i>այդ թվում</i>				
էլեկտրաէներգետիկա	101.0	99.8	99.1	98.3
գունավոր մետալուրգիա	103.6	169.6	173.8	249.8
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	100.1	91.8	102.8	126.1
մեքենաշինություն	105.3	89.8	79.8	102.4
այլ արդյունաբերական արտադրու - թյուն(ոսկերչական արդյունաբերություն)	104.5	150.6	132.9	117.5
անտառային, փայտամշակման, թղթի- ցեյուլոզի արդյունաբերություն	101.0	94.0	95.0	92.0
շինանյութերի արդյունաբերություն	98.7	85.5	81.9	108.0
թեթև արդյունաբերություն	96.9	81.7	84.3	101.9
սննդի (ներառյալ ալյուրի ու համակց - ված կերերի) արդյունաբերություն	99.4	110.1	120.6	127.6
պոլիգրաֆիական արդյունաբերություն	84.2	109.6	131.2	94.0

**Բեռնափոխադրումների սակագների ինդեքսը:** 2004թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է բեռնափոխադրումների սակագների 2.6% նվազում, ինչը հիմնականում պայմանավորվել է խողովակաշարային և երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների համապատասխանաբար 3.2% և 2.9% նվազումով: Նշված ժամանակահատվածում հանրապետությունում գրանցվել է ավտոմոբիլային և օդային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների համապատասխանաբար 1.4% և 0.8% հավելում:

2004թ. օգոստոսին 2003թ. օգոստոսի համեմատ բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 98.3%, այդ թվում երկաթուղային տրանսպորտով՝ 90.4%, ավտոմոբիլայինով՝ 104.7%, օդայինով՝ 85.8%, խողովակաշարային տրանսպորտով՝ 108.0%, իսկ հունվար-օգոստոսին 2003թ. հունվար-օգոստոսի համեմատ՝ համապատասխանաբար 100.3%, 94.2, 103.1, 90.7 և 107.9%:

**Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը:** 2004թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների 19.9% նվազում, ինչը սեզոնայնությամբ պայմանավորված՝ իրացման բոլոր ուղղություններով գյուղատնտեսական մթերքի 32.0-3.3% գնանկման արդյունք է:

**Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման միջին գները 33-ում 1999-2004թթ. օգոստոսին**

(դրամ)


	Չափի միավորը	1999	2000	2001	2002	2003	2004
Ցորեն	կգ	90	82	89	77	103	116
Գարի	- „-	71	69	67	62	71	99
Լոբի	- „-	290	307	300	450	...	350
Կարտոֆիլ	- „-	91	61	100	74	75	67
Կաղամբ	- „-	30	117	75	51	84	84
Վարունգ	- „-	47	49	58	84	38	94
Լոլիկ	- „-	30	37	40	38	33	40
Սմբուկ	- „-	26	48	44	46	45	65
Գազար	- „-	51	58	62	100	106	53



	Չափի միավորը	1999	2000	2001	2002	2003	2004
Գլուխ սոխ	- ,, -	76	85	73	77	94	106
Խնձոր	- ,, -	97	35	105	174	142	163
Տանձ	- ,, -	130	122	136	253	152	237
Խաղող	- ,, -	186	144	159	218	254	338
Մեղր	- ,, -	2556	2326	2689	2467	2487	2534
Միս տավարի	- ,, -	852	758	842	899	967	1057
նշխարի	- ,, -	824	772	841	928	958	1051
խոզի	- ,, -	951	1028	1141	947	1082	1439
Կաթ	լ	108	97	96	91	91	94
Մածուն	- ,, -	168	164	167	167	165	167
Պանիր (յուղոտ)	կգ	849	731	765	725	760	848
Չուլ	հատ	41	35	37	39	41	42
Միամյա խոտեր	կգ	17	15	17	19	21	20
Բազմամյա խոտեր	- ,, -	23	24	21	23	27	26

... \_ դիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել

**Գյուղերի իրացման գների հնդեքսները ՀՀ մարզերում 2004թ. օգոստոսին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի**  
(նախորդ ամսվա նկատմամբ, %)



**Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների հնդեքսը ՀՀ-ում, ըստ մարզերի (%)**

	2004 թ վ ա կ ա ն ի			
	օգոստոսը			հունվար-օգոստոսը 2003թ. հունվար-օգոստոսի նկատմամբ
	2004թ. հուլիսի նկատմամբ	2003թ. օգոստոսի նկատմամբ	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	
<b>ՀՀ, ընդամենը այդ թվում՝</b>	80.1	113.9	93.0	110.0
Արագածոտն	95.1	110.4	98.4	104.2
Արարատ	74.6	105.7	88.4	114.3
Արմավիր	61.2	126.5	91.2	119.9
Գեղարքունիք	100.1	109.2	95.3	94.3
Լոռի	101.6	114.1	97.3	115.8
Կոտայք	92.4	103.7	94.8	109.4
Շիրակ	99.5	109.7	92.1	112.5
Սյունիք	99.7	111.5	97.9	105.6
Վայոց ձոր	95.4	113.8	110.9	107.4
Տավուշ	98.4	115.9	110.1	120.5

2004թ. օգոստոսին հուլիսի համեմատ հանրապետությունում գրանցված գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման 1.6% գնաճը հիմնականում պայմանավորվել է գյուղատնտեսական մանր գործիքների (11.4%), անասունների (3.8%), պարարտանյութերի (1.7%) գնման գների և գյուղատնտեսական վճարովի ծառայությունների սակագների (8.8%) հավելաճով: Նշված ժամանակահատվածում էներգիայի և քսայուղերի

ապրանքախմբում գրանցվել է 1.1% գնման գնաճ, շինանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների, սերմացուների և տնկիների, անասնակերի ապրանքախմբերում՝ 12.9-2.2% գնանկում, իսկ մեքենասարքավորումների և պահեստամասերի գների մակարդակը հուլիսի գների համեմատ մնացել է անփոփոխ:

**Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը ԶԶ-ում, ըստ մարզերի**

(%)

	<b>2004 թ վ ա կ ա ն ի</b>			
	<b>օգոստոսը</b>			հունվար- օգոստոսը 2003թ. հունվար-օգոստոսի նկատմամբ
	2004թ. հուլիսի նկատմամբ	2003թ. օգոստոսի նկատմամբ	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	
<b>ԶԶ, ընդամենը</b>	101.6	112.1	111.5	107.5
<i>այդ թվում՝</i>				
Արագածոտն	101.1	109.4	109.0	108.1
Արարատ	102.5	121.7	111.3	109.4
Արմավիր	103.1	120.8	104.8	109.4
Գեղարքունիք	103.0	108.8	103.5	107.9
Լոռի	109.0	106.8	107.7	107.0
Կոտայք	103.1	96.3	105.6	100.2
Շիրակ	94.1	116.6	102.4	111.5
Սյունիք	102.6	108.1	106.2	101.5
Վայոց ձոր	103.0	110.5	110.5	108.4
Տավուշ	99.4	108.6	105.0	107.1